

ԱՆԵՏԱՐԵՐ




ՀԱՏՈՐ Խ.

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ, ՄԱՐՏ 1, 1911

ԹԻՒ 3

Սիրելի տղաք,

Արդէն ասկէ առաջ անցեալ տարուան վերջին առիթով ձեզի գրուած էր ձեր գիրքերուն, ձեր կազմակերպ անձնական մասնաւորաւոր մասին, և բացատրուած թէ ինչ տեսակ գիրքերով պէտք է նորագոյն ձեր մտանկադարձները: Ըստուած էր նաև թէ պէտք չէ անոնք վերք մը՝ պարզապէս գիրք ըլլալուն համար, այլ նկատի առնելու էր անոր ձեզի ունենալիք օգտակարութիւնը: Եւ այս սնգամ ձեզի այդ առիթով յանձնարարուած գիրքի տեսակներէն մէկուն վրայ ասկէ պիտի նմանանք և պիտի փորձենք աւելի յայտարարել անոր օգտակարութիւնը: Տեսալք որուն վրայ պիտի գրենք՝ կենսադրական գիրքերու տեսակն է:



Իսկ նոս բռնել պէտք եմ՝ թէ ձեր Հայ գրականութեան մէջ մեր գեռատի ընթերցողներուն համար մասնաւորապէս պատրաստուած կենսագրական գիրքերու շարքեր չունինք դժբախտաբար: Մեր ունեւորները թէև մեր հիմնական պէտքերը չեն գոհացներ, բայց կը յուսանք թէ պէտքի զգալութեան համեմատութիւնով պիտի տրուի նաև գոհացումը, և մենք ալ քաղութակիրիք ազդեցու պէս պիտի ունենանք դեռատի ընթերցողներու համար յատկապէս պատրաստուած օգտակար ու հրահանգիչ գիրքերու շարքեր:

Ինչպէս ասէն տեսակ գիրքերու, նոյնպէս ալ կենսագրական գիրքերու ընթերցողները պէտք է ըլլայ ուշադրութիւնով, պստմաւած գէպերուն և յայտնուած գաղափարներուն վրայ լրջօրէն անդրադարձալով և անոնց մեր ամենօրեայ կեանքին և նեապարզած կեանքի նպատակին ունեցած առնչութիւնն ու հրահանգութիւնները նկատազուգեցնելով: Եթէ ոչ՝ միայն կարողալ և գէպերն ու գէմքերը մեր յիշողութեան մէջ, որ մասնաւորապէս սուր է մեր գեռատի տարիքին առեւ, ամբարիտով չէ որ պիտի կրնանք քաղել սպասուած իրական օգուտը: Անդպիսի ու հեւ ի հեւ ընթերցում մը պարզապէս ժամաւաճառութիւն կը նշանակի:

Կենսագրական գիրքերը, որոնք ընդհանրապէս անցեալ մարգերու կեանքերուն նկարագրութիւններն են, մեզի համար օրինակելի և տիպար կեանքեր կը ներկայացնեն յաճախ. որովհետև ընդհանրապէս կը խոսին այն տեսակ կեանքերու մասին, որոնք կամ ամբողջ նկարագրով կամ նկարագրի գիտութիւններով արժանի են կենսագրակու: Զօր օրինակ, երբ կարգանք Արքայութեան Լիւթի մը ինքն զիւրական իրճիթէ մը մինչև նախագահական աթոռ, Տէյվիս Լիվինկըսթընի մը տղաքակի վրէժէ մը այնչափ յարգուած գիրքի մը բարձրանալը, մեր մէջէն այլքատ ու նիւթագէս աննախանձելի վրէժի մէջ գոհութիւններէն շատերուն ալ կուրծքը չ'ուրի բարձր ներշնչութիւնով: Երբ գիտութեան

